

գորգանման գործուած են, եւ սրբազան պաշտամանց պահանջներուն համեմատ տեղեր ալ գտառուած են: Այդ գեղեցիկ ձեռակերպը, որուն նման ուրիշ տեղ տեսնուած չէ, արդիւնք է Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսին նախաձեռնութեան, երբ 1652 թուին Երուսաղէմ կը գտնուէր Կիլիկիոյ գործերով: Յատկապէս կը յիշուի բեմին բարձրացումն ալ Փիլիպպոսի կարգադրութեամբ: Իսկ բեմին ճակատը քանդակուած ու ներկուած մարմարէ, պարսկական ճաշակով գործուած եւ Սեղբոս ամիրայի առատաձեռնութեամբ շինուած է 1730 թուականին:

Տաճարին եկեղեցական գարդերուն մէջ ամենէն նշանաւորն է աւագ սեղանին խաչկալը, բայց պարզ խաչկալ մը չէ: Զի սեղանին բուն խաչկալը ետեօք կը մնայ և սեղանին քովերը ու վրան ամբողջ ճակատը մը կը կազմեն, մինչև մեծ կամարին բերանը, համակ գեղեցկաքանդակ և ոսկեզօծուած փայտէ, տեղ տեղ պատկերներով, որոնք կը զանուէին մինչև իսկ ներքին խաչկալին աստիճաններուն երեսները: Կրիգոր Շղթայակիր և Յովհաննոս Կողոտ պատրիարքներու անունով շինուած է խաչկալը 1723 թուին, ի յիշատակ իրենց պարագայից եւ միաբանից եւ նուիրատուաց: Ամբողջ ճակատը փառայեղ յաղթական կամարի մը կերպարանք ունի, մէկ մեծ ու երկու փոքրագոյն կամարաձեւ բացուածքներով, իսկ վերեւ կը զարգարեն երեք փոքր գմբէթներ կամ կաթողիկէներ: Ոսկեզօծը նորոգուած է Կիրակոս Երուսաղեմացի պատրիարքին օրով 1847 թուին:

Նշանաւոր է նաև Տեառնեղբոր Արոար, վրան բարձր գմբէթով, համակ ընտիր փայտէ շինուած, և սատափեայ ազուցիկ կտորներով արհեստակերտ զարդարուած: Սովորական գործածելի աթոռ մը չէ. պատրիարքը տարին մէկ անգամ միայն, Տեառնեղբոր տօնին օրը, այդ աթոռը կը բարձրանայ, մէյ մըն ալ պատրիարքները իրենց առաջին գահակալութիւնը այդ աթոռին վրայ կը կատարեն: Պատրիարքներու սուրբախալստ արոար, Տեառնեղբոր աթոռին քովն է դրուած, դէպի դասին դուռը: Հաստատուն աթոռ մ'ալ կը մնայ Գլխաղիբի ատեանին անկիւնը, որ Ս. Մակարի գերեզմանին և մատուռին մօտ ըլլալուն Մակարի արոռ է կոչուած: Տեառնեղբոր նուիրական աթոռը արձանագրութեան մէջ եպիսկոպոսարան է ըսուած և շինուած ու զարդարուած է 1680 թուին Եղիազար Այնթապցի պատրիարքին ձեռ-